

ՍՄԲԱՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

«ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ»
(Տոն Վերափոխման)

Քրիստոսի Եկեղեցին և բովանդակ քրիստոնյա աշխարհը ս. Կույսը նկատում է որպես կյանքը նորոգող, կյանքին անմահություն պարգևող կենսունակ ակնաղբյուր:

Նա է մեր բոլորի Մայրը:

Նա է մեր քաղցր ու բարեգութ պաշտպանը, մեր բարեխոսն ու միջնորդիչը:

Այդ է պատճառը, որ Քրիստոսի Եկեղեցին մի քանի տոներով անմահացրել է նրա խնկաբույր հիշատակը:

Եկեղեցու անդամները նրան նկատելով որպես գորովագութ Մայր, նրա՛ն են հանձնում իրենց հոգսերն ու կարիքները, ցավերն ու ուրախությունները. «Ի քեզ եմք ապաւինեալ, Քրիստոսի Մայր Աստուծոյ մերոյ: Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ, պարծանք Եկեղեցւոյ, Քրիստոսի Մայր Աստուծոյ մերոյ: Որ քան զարեգակն պայծառագոյն Մարիամ, մի՛ դադարիր բարեխօսել վասն մեր, Քրիստոսի Մայր Աստուծոյ մերոյ» (Շարակնոց):

Հայ Առաքելական Եկեղեցին տոնախմբում է ս. Աստվածածնի հետևյալ տոները. ա) Հղություն, բ) Ծնունդ, գ) Ընծայումն ի տաճար, դ) Ավետում, ե) Վերափոխում, զ) Գյուտ գոտվո, է) Գյուտ տփո:

«Ս. Կուսին անձը, իբրեւ գերապանց միջոց փրկագործութեան, անբաժան է Յիսուսի փրկական տնօրինութիւններէն[1]»: Այս պատճառով սկզբից ևեթ Ուղղափառ Եկեղեցին մեծարում է նրա հիշատակը:

Վերափոխման տոնը Հայ Եկեղեցին տոնախմբում է օգոստոսի 15-ի մերձավոր կիրակին, այնուհետև ինն օր երկարաձգում տոնի շարունակությունը:

* * *

Նախաստեղծները, Աստուծո հրամանին անհնազանդ գտնվելով, կորցրեցին ամեն ինչ: Նրանք զրկվեցին Աստուծո երանացուցիչ տեսությունից: Այս ահավոր անեծքը տարածվեց Ադամի սերնդի վրա ամբողջովին: Բայց Աստված մարդկությանը այս ծանր մեղքի կապանքից ազատելու համար, իր անհուն ողորմածությամբ, աշխարհ ուղարկեց[2] իր Միածին Որդուն, որը, ըստ մարգարեի նախագուշակության, պետք է ծնվեր մի Կույսից. «Ահա Կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուել (ընդ մեզ Աստուած)[3], հետևաբար Բանն Աստված ի սկզբանե իրեն մայր ընտրեց Կույս Մարիամին:

Երջանիկ Մա՛յր: Աստվածամա՛յր: Աստվածածի՛ն:

Քրիստոսի հրաշափառ Հարության և Համբարձման խորհուրդներից հետո Ս. Կույսի **ննջումն** ու **վերափոխումը** ամենից հրճվալի տոնն է նկատվում քրիստոնյա աշխարհում:

Ս. Կույսի վերափոխումը հիմնականում երկու խորհուրդ է պարունակում իր մեջ. նախ՝ նրա մահը և ապա՝ վերափոխումը՝ մարմնի անապական մնալու խորհուրդը:

Կենդանության մայրը չմեռավ որպես պատիժ մեղքերի, այլ խոնարհությամբ լուծեց մահկանացու բնության պարտքը: Ընդհանրական Եկեղեցին խոստովանում է ս. Աստվածածնի մահը, բայց նրա երանելի մահը Եկեղեցվո հայրապետները որակել են լուսագեղեցիկ բառերով՝ **հանգիստ, ննջում:**

---

[1] Թորգոմ Պատրիարք՝ «Սուրբք եւ Տօնք» Երուս. 1957, էջ 251:

[2] Հմմտ. Հով. Գ, 16:

[3] Եսայի Է—14, Սաղմ. Ա. 24:

Աստվածածնի մահվան մասին եղած ավանդությունը գեղեցիկ կերպով նկարագրել է Կիրակոս վարդապետ Երզնկացին իր «Արեւելք գերարփին» շարականի մեջ:

Հովհաննես առաքյալի խնամքի տակ 15 տարի ապրելուց հետո Երուսաղեմ քաղաքում իր մահկանացուն է կնքում երանելի Կույսը: Առաքյալները (բացի Բարթողիմեոսից) մեծ հանդիսավորությամբ նրան թաղում են Գեթսեմանի պարտեզում: Թաղման կարգից հետո երեք օր անընդհատ նրա գերեզմանի վրա հնչում են հրեշտակային երգեր: Բարթողիմեոսը, որը ներկա չէր գտնվել թաղմանը, գալիս և խնդրում է առաքյալներին, որ բացեն գերեզմանը, որպեսզի վերջին անգամ իրեն շնորհվի Ս. Կույսին տեսնելու պատիվը: Առաքյալները բացում են գերեզմանը և, ո՞վ զարմանք, գերեզմանը թափուր են գտնում, որից և հետևցնում են, որ Կույսը որ ոչ թե մեռել, այլ՝ ննջել էր, իսկ նրա Միածին Որդին և երկրի չորս ծագերից ի մի հավաքված առաքյալները, հրեշտակների երգակցությամբ, նրան տեղափոխել էին երկինք, վերափոխել դեպի երկնային խորանը լույսի:

Վերափոխման առաջին օրվա շարականները (որոնք վերագրվում են Մովսես Խորենացուն) գեղեցիկ և պատկերավոր խոսքերով նկարագրում են խորհրդի բովանդակությունը: Բազմաթիվ երկնային ճանապարհներով թռչելով՝ հրեղեն կառքերը Տիրամոր մարմինը տեղափոխում են երկնային լուսո խորանը.

Այսօր ընդ բազմաչեայ քերովբէսն
Եւ ընդ վեցթեւեան սերովբէսն,
Մտանելով եօթնաստեղեան խորանսն,
Տեսանելով զանազան աթոռսն,
Զոր պատրաստեալ է քեզ տերունտյդ,
Երգեմք և մեք ասելով
Օրհնեալ ես՝ ամենօրհնեալդ ի կանայս:
(Շարակնոց):

Իր մոտ առնելով իր մորը՝ Միածին Որդին պատվիրում է երկնային զորություններին փառաբանել նրան:

Մարիամի անապական կուսությունը և կոյս մարմնի անապականությունը, որպես անուշ բալասան, լուսավորում և ջերմացնում է մարդկանց հոգիները, և ողջ մարդկությունը, հայացքն ուղղելով ս. Կույսին, աղերսում է.

— Բարեխօսեա վասն մեր ...

Մահվամբ և վերափոխմամբ երանելի ու ցանկալի թագուհին վերծ մնաց ծերության թուլություններից, որպես անբիծ շուշան չըկըրեց ապականության ախտալից հետքերը, այլ, իր Որդու հրավերով վերափոխվեց դեպի կապույտի անսահման ոլորտները: Սիրո վեղմամբ, հոգեվայել հավիշտակությամբ է, որ նա ընդունեց այդ հրավերը:

Գողգոթայի բարձունքին, խաչի վրա գամված Միածնի մահվան տագնապների մեջ ս. Կույսը բաժնեկից եղավ նրա մահվան: Նա նույնպես քամեց Գողգոթայի դառնահեծ մահվան բաժակը և այնտեղ մարտիրասացավ:

Աստված Մարիամի միջոցով երկնքից երկիր բերեց Բանն Աստված, իսկ Որդին Միածին՝ երկրից երկինք տեղափոխեց իր մորը՝ ս. Կույսին:

Մեծ է Մարիամի աստվածասիրությունը: Վերափոխմամբ նա մի պահ դադարում է մայր լինելուց, վեր է բարձրանում պարզ որդեսիրությունից և ամբողջապես ընկղմվում աստվածասիրության անհունի մեջ: Ինչպիսի՜ աստվածզգացողություն...

Միածին Որդին գերեզմանից հարություն առնելուց հետո[4] թույլ չի տալիս, որ ապականությունը տիրի Կույսի Մարմնին[5]:

Անկարելի էր, որ Կույսի սրբակնասուրբ մարմինը մատնվեր անզգայության, անկենդանության և ապականության. «Ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, եւ ոչ տացես Սրբոյ քում տեսանել զապականութիւն»[6]:

Անկարելի էր, որովհետև «զանապական Կոյսն» Միածին Որդուն «մաքուր կաթամբ կերակրեաց», ուստի Տերը Կույսին վերափոխեց «յերկնայինսն յաստուածակերտ խորանս և յանպատում ի կեանս»...

Ս. Կույսը վերափոխվեց՝ հաղորդակից դառնալու աստվածային փառքին:

Հիսուս հարություն պարգևելով Կույսին, նրան միացնելով իր հոգուն՝ զլացավ դեպի երկնային թագավորության սահմանները:

Ավետարանը չի մատնանշում ս. Կույսի վերափոխման դավանությունը, «թեև ամենահին ժամանակներեն կար անոր մտածումը՝ ս. Կույսին ձոնված բանաստեղծական և խորհրդաբանական գրվածքներուն մեջ, բայց անոր իբր վարդապետություն ընդունվիլը առ նվազն Թ և առ առավելն ԺԲ դարերուն էր միայն, որ կատարվեցավ, տոնը ևս կոչվելով այդ մտոք՝ վերափոխում»[7]:

Վերափոխման տոնը ավելի վաղ, չորրորդ դարում է տեղի ունեցել: Այն ճոխացվել է ս. Սահակ հայրապետի և Մովսես Խորենացու միջոցով և ապա Գրիգոր Նարեկացու աղոթքներով և Ներսես Շնորհալու ու Ներսես

---

[4] Հմմ. Գործք. Բ, 24—27, և Սղմ. ԺԵ, 10:

[5] Սաղմ. Ճ և Ա—8:

[6] Սաղմ. ԺԵ—10, Գործք Բ.—27:

[7] «Սուրբք և Տօնք», էջ 255:

Լամբրոնացու կարգադրություններով փառավորվել:

Աստվածածնի Վերափոխման տոնին, Հայ Եկեղեցում պահպանված ավանդության համաձայն, տեղի է ունենում խաղողի օրհնություն: Խաղողի առաջին ողկույզները նկատվում են տարվա պտուղների երախայրիքը: Հրեաների սովորության համաձայն, Մովսեսի միջոցով տարվա պտուղների երախայրիքը ընծա էր տրվում Տիրոջը՝ վկայության խորանի վրա: «Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց, եւ հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց, զի լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենոյ, եւ գինեաւ հնձանք քո առատեալ եւս բղխեսցեն[8]»:

Խաղողը համարվում է դաշտերի ալնվագույն պտուղը, ինչպես որ Հիսուս համարվում է Աստվածածնի օրհնեալ պտուղը. «Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո[9]»: Զէ՞ որ Տերը վերնատան մեջ խաղողի հյութից պատրաստեց վերջին ընթրիքը[10] իբրեւ նշան իր սուրբ արյան:

Ստորև ներկայացնում ենք սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի խաղողի օրհնության աղոթքը Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի աշխարհաբար թարգմանությամբ:

ԱՂՈԹՔ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԽԱՂՈՂԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տեր Աստված, Հայր անսկիզբն, անեղ և անմահ բնություն, ինքնագո, որ ամեն ինչ ստեղծեցիր ոչինչեն և արարչագործությանդ երրորդ օրը հրամայեցիր երկրին՝ բուսցնել կանանչ պտղատու տունկեր և բույսեր բանավոր ու շնչավոր կենդանիներու համար, որոնց հետ դրախտին մեջ գեղեցիկ ծառեր տնկեցիր բանական արարածներուդ վայելքին համար, լորս օրհնեցիր աստվածային խոսքովդ, թե Աստված տեսավ, որ բարի են հույժ, և օրհնեց կանոնք:

Եվ արդ, Տեր, նույն օրհնությամբ, որով օրհնեցիր արարածները արարչությանդ առաջին օրը, օրհնե նաև այժմ քեզի ընծայաբերված այս տարվան պտուղներուն երախայրիքը՝ խաղողի առաջին ողկույզները, ըստ հին Ահարոնի քահանայության, վասնզի, ինչպես որ հրամայեցիր Իսրայելին՝ Մովսեսի միջոցավ՝ առաջին պտուղը ընծայել քեզի վկայության խորանին վրա, որպեսզի մասկայության խորանին վրա, որպեսզի մասնավոր ընծայով բոլոր պտուղները ընդունին քու օրհնությունդ, նույնպես այս նվիրված պտուղին խառնե և միացուր քու աստվածային և հոգևոր օրհնությունդ, և մենք այս նյութական պտուղը ճաշակելով՝ քու օրհնությանդ իմանալի շնորհները ընդունինք մեր հոգիին մեջ՝ արժանանալով մեղքերու մաքրության և թողության: Եվ արժանի ըլլանք ճաշակելու կենաց ծառին պտուղը, զոր պահպանել հրամայեցիր բոցեղեն սուրով քերովբեներուն: Եվ անով անմահացած՝ անմահներու դասին հետ միասին միշտ փառավորենք զՔեզ Որդիիդ և Սուրբ Հոգիիդ հետ. այժմ և միշտ և հավիտյանս, հավիտենից. ամեն:

Խաղաղութիւն ամենեցուն,
Աստուծոյ երկիրպագեսցուք.

Օրհնյալ ես, Որդի և բան Հոր, ճառագայթ անճառելի առաջին Լույսին, կերպարանք և պատկեր աներևույթ Աստուծո, որ ինքվինքդ կոչեցիր որթատունկ, և սիրով ու հավատքով քեզի միացածները անվանեցիր ուռ, և Հայրդ՝ մշակ: Ու խաղողի հյութեն պատրաստեցիր վերջին ընթրիքդ, իբրև նշանակ քու սուրբ արյանդ, զոր օրհնեցիր վերնատան մեջ ու տվիր աշակերտներուդ՝ ըսելով. «Ասիկա իմ արյունս է, որ կթափվի աշխարհի փրկության համար»:

Եվ արդ, Տեր, օրհնե քու սուրբ Տաճարիդ մեջ ընծայաբերված այս խաղողի ողկույզները և անկե ճաշակողներուս շնորհե հոգևոր և մարմնավոր առողջություն: Օրհնե նաև, Տեր, այս պտուղներու նվիրատուները և կանոնք վարձատրե անմահական պարգևներովը: Օրհնե, Տեր, այգիներն ու որթատունկերը, որոնցմե քաղված են օրհնության համար բերված այս ողկույզները և նվիրված քու սուրբ Եկեղեցիիդ: Զանոնք պտղալից ու բազմաբեր ըրե, պարարտ ու բարեբեր սրբոտերու պես, անփորձ պահե. Տեր, այգեստաններն ու դաշտերը ամեն տեսակ պատահարներե, որոնք վերեն կուգան մեր մեղքերուն համար.—կարկուտներե, եղեմնահար սառնամանիքներե, խորշակահար հովերե, վնասակար ճճիներե և միջատներե, որպեսզի արժանի ըլլանք վայելելու արքայությանդ սեղանը և փառավորենք Հայրը և Որդին և Ս. Հոգին, այժմ և միշտ և հավիտյանս, հավիտենից. ամեն:

[8] Առակք. Գ—9—10:
[9] Ղուկ. Ա—42:
[10] Ն. Շնորհալի. Աղոթք ...